# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**
   Հայրապետ Հայրապետյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի վարչության էներգետիկ տարածաշրանային շուկաների բաժնի գլխավոր մասնագետ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ**
   Բելգիայի Թագավորություն, ք.Բրյուսել, 2026 թ.հունիսի 18-ից 19-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
   ԵՄ «EU4Energy» էներգետիկ կարգավորողների եվրոպական խորհուրդ (CEER):

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**
   Մասնակցություն ԵՄ-ն հանուն էներգետիկայի (EU4Energy) ծրագրի շրջանակներում «Հարավային Կովկասի էներգետիկ կապակցվածություն» թեմայով առաջին հանդիպմանը:

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**
   «Հարավային Կովկասի էներգետիկ փոխկապակցվածություն. հայեցակարգ, նպատակներ և իրականացման ճանապարհային քարտեզ», «Տարածաշրջանային ցանցային ենթակառուցվածքների զարգացում և ներդրումային գործունեության համակարգում», «MIBEL-ի փորձի ուսումնասիրություն. ազգային շուկաներից դեպի տարածաշրջանային ինտեգրված շուկա», ընթացիկ և ապագա հավասարակշռման կարիքների, ինչպես նաև ազգային ռեսուրսների հասանելիության գնահատում, միջսահմանային թողունակության բաշխման ընթացակարգերի գնահատում, տարածաշրջանային հավասարակշռման շուկայի ներդրման հիմնական խոչընդոտների բացահայտում: «Վերականգնվող էներգիայի ընդլայնման համակարգային ազդեցությունները տարածաշրջանային էներգահամակարգերում», ինչպես նաև «Էլեկտրաէներգիայի շուկայի թափանցիկությունը Եվրոպական միությունում. գործնական կիրառման մեխանիզմները»:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**
   Երկօրյա ինտերակտիվ ուսուցողական դասընթացը կենտրոնացել էր հիմնականում Հարավային Կովկասում էներգետիկ կապակցվածության և էներգետիկ համակարգի ճկունության խթանման վրա, ինչպես նաև Վերականգնվող էներգիայի ընդլայնման համակարգային ազդեցությունները տարածաշրջանային էներգահամակարգերի վրա:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Ներկայացվեցին հետագա համագործակցության ուղղությունները, պայմանավորվածություններ են ձեռք բերվել առկա և հեռակա հանդիպումներ անցկացնելու վերաբերյալ:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Կազմակերպիչների կողմից ընդգծվել է կարևորությունը՝ նմանատիպ դասընթացներից հետո մասնակիցների միջև գործնական շփումների, փորձի փոխանակման և ձեռք բերված գիտելիքների գործնականում կիրառման:

ՀՀ ՏԿԵ նախարարության էներգետիկայի վարչության էներգետիկ տարածաշրջանային շուկաների բաժնի գլխավոր մասնագետ Հ. Հայրապետյան